Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին

ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).** Նախագծի նպատակը ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված՝ հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման համակարգի կիրառության արդյունքում առաջացած՝ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի ռեգրեսիվությունը մեղմելն է:

2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված՝ հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով վերադարձված գումարները եկամտային հարկով հարկման առումով համարվում են նվազեցվող եկամուտներ:

Եկամտային հարկի վերադարձման համակարգից օգտվելու առումով ֆիզիկական անձանց ստացված աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումների չափից կախված՝ սահմանափակումներ չեն կիրառվել, ինչը նշանակում է, որ անկախ աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումների չափից՝ ֆիզիկական անձինք կարող են օգտվել համակարգից և հետ ստանալ եկամտային հարկի գումարները:

Հաշվի առնելով այն, որ վարկունակ են և վարկեր են ստանում հիմնականում համեմատաբար բարձր աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ ստացող ֆիզիկական անձինք՝ գործնականում ստացվել է այնպես, որ համակարգից առավելապես օգտվում են նշյալ անձինք: Արդյունքում համեմատաբար բարձր աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ ստացող ֆիզիկական անձինք փաստացի եկամտային հարկ չեն վճարում կամ վճարում են փոքր չափով (քանի որ եկամտային հարկի գումարները ամբողջությամբ կամ հիմնականում հետ են ստանում), իսկ համեմատաբար ցածր եկամուտներ ստացող անձինք վճարում են 20 տոկոսի չափով եկամտային հարկ (քանի որ համակարգի շահառու չեն):

Մյուս կողմից, ինչպես հայտնի է, վերջին տարիներին եկամտային հարկի պրոգրեսիվ և բարձր դրույքաչափերից անցում է կատարվել համահարթ՝ 20 տոկոս դրույքաչափի, ինչը նշա-

նակում է, որ անկախ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների չափից՝ ֆիզիկական անձինք եկամտային հարկը վճարում են նույն դրույքաչափով: Խնդիրն այն է, որ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգը ընդգծված ռեգրեսիվ է դարձել՝ հիմնականում պայմանավորված հիպոտեկային վարկի սպասարկման տոկոսների չափով եկամտային հարկի հետ վերադարձով:

Բացի այդ, ինչպես բազմիցս նշվել է, եկամտային հարկի վերադարձման համակարգի կիրառության հարցը քննարկելիս անհրաժեշտ է համակարգը դիտարկել բյուջետային գործընթացի շրջանակներում սոցիալական նշանակությամբ պետական աջակցության ծրագրերի ընդհանուր համատեքստում:

Այս կապակցությամբ, կարևորելով սահմանափակ բյուջետային միջոցներն առավելագույն հասցեականությամբ և արդյունավետությամբ օգտագործելու նպատակադրումը՝ համակարգի կիրառության արդյունքում առաջացող՝ պետական բյուջեի լրացուցիչ ծախսերը հիմնավորվածության ու առաջնահերթությունների առումով պետք է անպայմանորեն համադրվեն միևնույն՝ սոցիալական ոլորտում այլ բյուջետային ծրագրերի շրջանակներում կատարվող ծախսերի հիմնավորվածության ու առաջնահերթությունների հետ: Ընդ որում, հարկ է նկատել, որ եկամտային հարկի վերադարձման համակարգի սպասարկմանն ուղղվող՝ պետական բյուջեի միջոցների չափը հատկապես վերջին տարիներին էականորեն աճել է և դեռևս շարունակում է աճել:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նկատել նաև, որ 2015 թվականի ընթացքում վարկառուներին (համավարկառուներին) վերադարձվել է 273,9 մլն. դրամ, 2016թ.՝ 1.3 մլրդ. դրամ, 2017թ.՝ 2.4 մլրդ. դրամ, իսկ 2018թ.՝ 4,7 մլրդ. դրամ, 2019թ. 7,9 մլրդ դրամ, 2020թ. 13,3 մլրդ. դրամ, 2021թ. 22,6 մլրդ. դրամ, 2022թ. 36,5 մլրդ. դրամ և 2023թ. 51,9 մլրդ. դրամ, ինչը նշանակում է, որ եկամտային հարկի վերադարձման համակարգի շրջանակներում պետական բյուջեից կատարվող ծախսերը էական են և յուրաքանչյուր տարի աճում են՝ մեծ բեռ դառնալով պետական բյուջեի վրա: Բացի այդ, վերջին տարիներին աճել է նաև համակարգից օգտվողների քանակը:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծով առաջարկվում է սահմանել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված՝ հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով վերադարձված գումարները ենթակա են եկամտային հարկով հարկման:

4. Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված

տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման համակարգի շրջանակում ֆիզիկական անձանց ստացվող գումարներն են:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք. Նախագիծը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թվականների ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագիծը բխում է Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի 6.8-րդ «Հարկաբյուջետային քաղաքականություն» մասով սահմանված քաղաքականության ուղղություններից, ըստ որի՝

- հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակը պետական ֆինանսական համակարգի բարձր արդյունավետությունն է: Դրան հասնելու նպատակով Կառավարությունը շարունակելու է հարկային քաղաքականության այնպիսի բարեփոխումներ, որոնք նպաստելու են բիզնես միջավայրի մրցունակության բարձրացմանը և միաժամանակ պետական բյուջեով սահմանված հարկային եկամուտների ապահովմանը,
- լավարկվելու է հիպոտեկային վարկի տոկոսների չափով եկամտային հարկի վերադարձման համակարգը և դրան հաղորդվելու է տարածքային համաչափ զարգացման և ավելի ընդգծված սոցիալական ազդեցության նշանակություն: